

ՊԵՆՈՒՐԵԱՆ ՀՇՈ ՊՈՅՏՈՆԵՊԸԼԷ ՈՄԵՆԷ

Ի ՊԱՐՍԿԱՍՏԱՆ.

(Ե Ր Բ Է - Է Ն Տ - Գ - Զ .)

Երբ Մանուչար Խանը իւր բանակովը վերադառնում է Թէհրան, Շահը նրան կրկին առաքում է աւելի հզօր և ստուար բանակով Շուշուէր և Գէոֆուլ (հին պատմական Շուշ և Տիգրօն), որ Երաղ-Երաթ - Եջէմի, Խուզստանի (հին Խուժստանի), Լօռստանի, Բախտիարու (հին Բախարիայ) և Վիրման - Շահի բարեկարգիչ լինի, անմիջապէս և Սուլէյման Խանն էր նրա ընդհանուր զօրավարն: Էս նահանգներումը շատ ձակատամարտներ է մղում Սուլէյման Խանը, երբեմն ի ներկայութեան Մանուչար Խանի և երբեմն առանց նրա ներկայութեան:

1839 ամին Շահը յանկարծ շնորհում է Մանուչար Խանին և Ապահանի հրամանատարութիւնը, վասն որոյ և նա գնում է Ապահան առժամանակ հանդստանալու համար, իսկ Սուլէյման Խանին թողնում է Խուժստանումը և Լօռստանումը ինքեան տեղապահ:

Եհն տեսանք, էս երկու անձնաւորութիւնների զործողութիւնները միմեանց հետ շաղկապուած լինելով, անշուշտ և պ. յօղուածագիրն էլ սխալուել է կամ թէ նրան սխալ են հասկացրել:

1847 ամին երբ Մանուչար Խանը վախճանում է, Շահգասայ Երտաշիր Միրզայն նշանակվում է հրամանատար Լօռստանին, Խուժստանին, Բախտիարուն և Չափ - Մէհրմանին. իսկ Սուլէյման Խան Արհամ - ուլ - Գովէն նրան Վէզիր

և անմիջապէս ընդհանուր զօրավար (Սերտէր, որ աւելի մեծ նշանակութիւն ունի քան զՍերտէրտէր), երբ և Երաթ ցեղապետներն ապստամբում են և խիզախում ընդդէմ Երտաշիր Միրզային նշանակուած պաշտօնատարներին, բայց Սուլէյման Խանը յարձակվում է նրանց վերայ, սաստիկ պատերազմներ մղում, բոլորին յաղթում և զսպում: Երբունիքն էս ամենը տեսնելով, Երտաշիր Միրզային բերել է ապիս Թէհրան, իսկ Արհամ - ուլ - Գովէնին թողնում է իր պաշտօնումը, մի և նոյն ժամանակն էլ Տահանգիր Խանին, — նրա որդուն, — նշանակում, իր հօրը տեղապահ (Նայէբ):

Էս չեմ ներում ինձ կարծել որ՝ պ. յօղուածագիրն իր տուած տեղեկութիւններն լրած լինէր Տահանգիր Խանին, և էն էլ էն կարճ միջոցումն, ինչպէս ինքն էլ ասում է «գիշերից բաւական անց էր որ Տահանգիր Խանի հետ ծանօթացայ»: Ինչպէս ես մօտիկ կ'ձանաչեմ Տահանգիր Խանին, նա ոչ սնափառ է և ոչ պարծենկոտ, ուրեմն պ. Բաթթիւն էս տեղեկութիւնները յստակ աղբիւրից չէ ժողոված, և Սուլէյման Խանին փոխանակ երկար ժամանակ ամբողջ Շիրազի և Ապահանի նահանգներին Փոխարքայ անելու, եթէ ասել էր թէ, Շուշաւորում և Գէոֆուլում (ուր մեր երանելի նախարարներն ահամայ արտաքուստ մոզութիւնը ընդունեցին, որիցը ծագեց Սուրբ Վարդանանց կրօնական պատերազմն և նահատակութիւնը Եւարայրի դաշտումը) Վէզիր էր, իհարկէ էն ժամանակն իր պատմական յիշատակներն աւելի ևս խորհրդաւոր արձագանգ կունենային ամեն ընթացող շայ

մարդու սրտումը ու աւելի կը հրաշագնէր իր հերոսներէ պանծալի անուանները և յիշատակները:

Պ. յօդուածագիրը շարունակում է թէ՛ Սուլէյման Խանը « ազգաւ Հայ էր և մինը այն ազնուականներից (սրա որդուն սրանից առաջ » Պայծառափայլութեան » տիտղոսը ընծայեց, որ մեր ժամանակումը Իշխանազնի (Անեազնի) են տալիս: Հիմ կարծում որ նա էս բառի նշանակութիւնը խմանում չլինէր), որ Աղայ - Մահա-մադ - Խանը Թիֆլիսից տարաւ Թէհ-բան:» Չհասկացայ, պ. յօդուածագիրն էստեղ «տարաւ» բայն ի՞նչ մտօք է դործ ածել, թերևս «գերի կամ իր կամովը տարած» է կամեցել ասելն, բայց էս բառերն մտապել է: Քիարդ և իցէ, խնդրեմ լսել:

Աղայ - Մահամադ Խանը (Շահը) 1795 ամի Սեպտեմբերի 9 - 10 - ին յարձակվումէ Թիֆլիսի վերայ և աւերում ու մօտ տան և հինգ հազար հոգի գերիներ վարում, և 1797 ամի կէսին Շուշի բերդումը սպանվում: Սրան յաջորդում է Ֆաթե - Ալի Շահը: Անեազն Յիցիսնովը 1801 թուին Արևանի վերայ արշաւելիս, քանի մի հարիւր Աբայ և Հայ իշխանազներ և ազնուականներ որպէս կամաւոր հեծելազօրք՝ ուղղեկից են լինում: Արևան պաշարած ժամանակն էս կամաւոր հեծելազօրքը խռովումէ, Յիցիանովլչն և վերադառնում Թիֆլիս, Ֆաթե - Ալի Շահը լսում է նրանց վերադառնալը, հետեւակ և հեծալ զօրք է առաքում, Բամբակաձորումը նրանց քամակից և առաջեցը պաշարումեն, յարձակվում, նրանց մեծ մասին կոտորում և մնացեալն գերի վարում: Էս գերիների մէջ լինումէ և քր-

սանամեայ Մանուչարն (փաղաքշարար Չօնգուր կոչեցեալն): Սրա երէց եղբայր Միրզայ Առասումը 1805—1806 թուին գնում է Պարսկաստան՝ որոնելու և ազատելու իր երկու կրտսեր եղբայր Տահանգիրին և Տահան—Բալիին, որոնք Թիֆլիս աւերելիս աներեւոյթ էին եղած, և Մանուչարին՝ որ Բամբակաձորումը էր գերի ընկած՝ որպէս յիշեցինք: Միրզայ Առասումն երկու աներեւոյթ եղած եղբայրների հետ չէ կարողանում գանել բայց լսում է որ Մանուչարին ներքինացրել են ու տարել Թէհրան, ինքն էլ գնում է Թէհրան, աշխատում է, տեսնումէ չէ կարելի ազատել, որովհետև նա արդէն Շահի կանանոցումն էր, վասն որոյ վերադառնում է և Թավրիզում մտնում է Թագաթառանգ Աբրաս Միրզայի մօտ ծառայութիւն, ուր օր ըստ օրէ իր խոհեմութեամբ, գործունէութեամբ կնքան մօտանում է Թագաթառանգին, ինչպէս Վաթուղեկոսական Անդակները՝ ևս և Առուսաց պաշտօնական թղթակցութիւններն էլ վկայում են, որ նա համարվում է իր տիրոջ մահերիմն և խորհրդակիցն: Էս միջոցներումը նրա երէց որդի Սոյումօնը (յետոյ Սէհմ - Ալ - Վալիէ) 18 - 19 տարեկան զուով, Թիֆլիսումը մտնում է Առուսաց ծառայութիւն Գրաթօն (Ախշապ) ասած հեծելազօրքի մէջ. իսկ նրա կրտսեր եղբայր տիրացու Գուրգէնը (որ յետոյ Միրզայ Գուրգէն խան) գնում է Թավրիզ իւր հօրը Միրզայ Առասումն բերելու: Հայրը չէ վերադառնում: Գուրգէնը վերադառնումէ Թիֆլիս՝ տեսնում է իր մայրը արդէն վախճանուած, վասն որոյ ծածկարար յորդորումէ եղբօրը, Սոյումօ-

նին, թողնել Առուսաց ճառայութիւնը (որ նոր էր ստացել Պրասպրըշնէն-Նեան աստիճանը) ու միասին փախչին գնան իրանց հօր մօտ: Սողոմօնը էս զաղանկըը յայտնում է իր ճառայակից և սերտ բարեկամ Աւրացի Սաղինեց Վաւիթի և Չալին (որոնք յետոյ Վաւիթ Խան և Չալ Խան), վերջններս էլ համաձայնումեն ու 1811—1812 թուին էս չորս երիտասարդները փախչում են գնում Թավրիզ, տեսնում են Միրզայ Առասովը փախճանուած, վասն որոյ Աղալար բէկը (յետոյ Աղալար Խան, որ էր Միրզայ Առասովի և Մահուշար Խանի եղբայրն) նրանց ներկայացնում է Թագաժառանգին, որ Սողոմօնին՝ Վաւիթին և Չալին ընդունում է իր մօտ գիւուորական ճառայութեան մէջ, իսկ Վուրգէնը գնումէ Թէհրան իր հօրեղայր Մանուշար Խանի մօտ:

Աւրեմն Աղա - Մահաւաղ Խանը Սուլէյման Խանին չէ տարել Թէհրան, այլ ինքն է փախել գնացել Թավրիզ:

Պ. Բաֆֆին այնուհետև շարունակում է, «Տահանգիր Խանը . . . որպէս հմուտ մեքենագէտ և ճարտարապետ առաջինը եղաւ, որ Թէհրանումը հիմնեց մի գործարան թնդանօթներ ձուլելու և զինուորների Աօրական ղէնքերի ձեւը Աւրուպականի փոխելու:

Խնդրեմ էս կէտի՝ կամ լաւ ևս ասած՝ էս բառերի վերայ փոքր ինչ աւելի ուշադրութիւն դարձնել: Նախ որ Պարսկաստանումը մեքենագործութեան և ճարտարապետութեան դպրոցներ չ'են եղած և չ'կան, ուր Տահանգիր Խանը էդ մակայութիւնները կամ արհեստները սովորել էր: Արհրորդ՝ որ նա՝ մինչև իր 30 — 31

տարեկան դառնալը էդ արհեստներովը չ'էր պարագած և Պարսկաստանից ոտը դուրս չ'էր դրած, որ էդ արհեստները սովորել էր: Նա 1862 — 1863 թուին քանի մի ամսումը գնաց Ա. Պոլիս ու վերադարձաւ, և վերջին անգամն էլ, այս ինքն 1876 ամի Վեկտեմբերին գնաց Աւրուպայ զանազան զինուորական ղէնքեր և գործիքներ գտնելու, ուր ինը ամսաչափ շրջելուց յետոյ, 1877 ամի Սեպտեմբերին վերադարձաւ Պարսկաստան, երբ հանդիպել է պ. յօդուածագրին Աղասովի իջեւնումը: Հաստատի եմ որ ինքը պարոն յօդուածագիրն էլ կիսոստովանի որ՝ Տահանգիր խանը էնքան կարճ միջոց Աւրուպայումը մնալով, թէև շրջագայած ևս չ'լինէր, նա չ'էր կարող էն երկու դժուարին արհեստները հրմուտ սովորել, թերևս նա մեքենագործական և ճարտարապետական բնական ձիրք ունի, ուրեմն աւելի լաւ կանէր Պ. Բաֆֆին որ ասել էր թէ, նա իր ճառայակիցների կամ բոլոր Բրանի մէջ աւելի հմուտ մեքենագործ և ճարտարապետ է:

Վանք միւս կէտին: Եանք թէ, ժամանակակիցներս և ակադեմիաներս մեզ չ'զիտնալու տունք, լռեցինք որ մինչև 1834 թիւը (երբ Տահանգիր խանը նոր ծնած կ'լինէր) Աւագ խան Սելիք - Սէհրաբեանցը, Վաւիթ Թահաւաճեանց և ուրիշները՝ Պարսից տերութեան հետ կապուած էին ու նրա զօրքի համար Առուսաստանից և Աւրուպայից ղէնքեր, հրացաններ, հանդերձանք և պատերազմական գործիքներ էին բերել տալիս, բայց ի՞նչ պատասխանեք Պարսից պատմութեանը, Աւրուպացի ակադեմիաներս ճանապարհորդներին և պաշտօնական թրդ-

Թակցութիւններին, որոնք միաբերան վր-
 հայում են թէ՛ առաջին անգամ Իրանի
 զինուորների Եսիական զէնքերի ձեռ Աւ-
 րոպականի փոխելն և վառօթ շինելն եղած
 է 1807—1808 թուերին մեծն Նապոլէօ-
 նի ուղարկած Բրանաիացի և ապա Կնդ-
 ղիացի աստիճանաւորների ձեռքովը. իսկ
 1837—1838 թուերին Հաջի - Միրզայ -
 Աղասու Սաղրաէզիմութեան ժամանակն
 Աւրոպացի մեքենադէաներն են եկած ու
 Թէհրանում հրացաններ շինելու և թըն-
 դանօթներ ձուլելու գործարաններ բացած,
 և շատ անգամ էլ Հաջի - Միրզայ - Ա-
 ղասին ոչ միայն դեսպանների և ճանա-
 պարհորդների մօտ պարծենում է եղել
 թէ հազար հատ անիւնների վերայ և անա-
 նիւ թնդանօթներ եմ ձուլել տուել, այլ
 և ինքը Հաջին նրանց առաջնորդում է
 լինում՝ գործարանը ցոյց տալու համար:
 Աւրեմն պ. յօդուածագիրն աւելի լաւ կա-
 նէր, եթէ ասել էր թէ՛ Զահանգիր խանը
 Պարսկաստանի զինուորների զէնքերը և
 թնդանօթները ձուլելու գործարանները
 բարեկարգեց կամ վերանորոգեց, որ աւելի
 ճշմարտանման կլինէր, մի և նոյն ժամա-
 նակն էլ աւելի փառք ու պատիւ ընծա-
 յած կլինէր նախ:

Նայելով այժմեան Մուսուլմանների
 կրօնամոլութեանը, չէ՛ կարելի և դուռս
 անընական ևս է, որ Պարսկաստանումը
 մէկ քրիստոնէի անգամ ընտրէին զազանի
 (սորհրդարանին*), ուրեմն և էս կէտն էլ,
 ցաւելով ասեմ, անհիմն է: Նոյնպէս Զը-

հանգիր խանը սենեկապետութեան ոչ
 պաշտօնը և ոչ կոչումն ունի: Մենեկապե-
 տի պաշտօնն է թէ՛յ, սուրձ, կախան (խոր-
 խտուակ), նախաճաշիկ, ճաշ և ընթրիք
 մատուցանել Տիեզերքի աղօթարանին:
 Եւրոպացի (Եւրոպացի մուսուլմանների կրօ-
 նական օրէնքը) սաստիկ արգելում է մու-
 սուլմաններին էդպիսի բաները ընդունել
 քրիստոնէի ձեռքից, ուրեմն Զահանգիր
 խանը չէր կարող սենեկապետ ըլնել, այս
 ինքն Խան - Գէլ - Խոյմաթ - Բաշի: Ասկը թէ
 սենեկապետ ևս լինէր, ապաքէն դա մէկ
 նախանձելի և արժանաւոր պաշտօն չէր
 Սուլէյման խան Արհամ - ուլ - զովլէի նը-
 ման հոյակապ անձի որդուն և նոյն իսկ
 Զահանգիր խանի անձնաւորութեանը:
 Բայց նա՛ ինչպէս ասում են, գորանից ա-
 ւելի բարձր կոչումն նոր ստացել է, այս
 ինքն աջո-դան Բաշի-Սէլեան, որ կնշանա-
 կէ գլխաւոր, երէց աջակից նորին մեծու-
 թեան Տիեզերքի աղօթարանին, ուրեմն
 և նա իրաւունք ունի պատերազմի նախա-
 բարի հիւանդութեան և բացակայութեան
 ժամանակը՝ նրա պաշտօնն ևս կատարել,
 և նոյնպէս նրա Տիւ փանջա - Սէլեան, որ պ.
 յօդուածագիրը թարգմանում է, ի՛նչ
 մտօք, չհասկացայ « Գէնեբալ Ինճանդեբէ »:
 Տիւղոս Տիւ փանջայ այս ինքն գորագլուխ
 հինգ վաշտի կամ հինգ հազար հետեակ
 զօրքի, նրա կոչումն է և ոչ պաշտօնը, ո-
 բովհետեւ նրան էնքան վաշտեր կամ զօրք
 չեն ենթադրուած, ապաքէն էն թարգմա-
 նելն « Գէնեբալ Ինճանդեբէ », ստոյգ է ար-
 դեօք:

Պատմաբանը կամ պատմական յիշա-
 տակներ զրոգը պիտի զգուշութեամբ, շատ
 ճիշդ և ո՛րչա բառեր գործ ածէ, մանա-

(*) Թող ներուի և մեզ ասել, որ յայտ մասիս
 չարաչար կոխալուի Պ. Շիրմաղանեանց, ևս գող-
 ցես մի արտով կտեսնէ:

ւանդ էն անձն որ՝ ինչ պետութեան վերաբերեալ անցքի վերայ խօսում է, այն տեղ ծնած և այն տերութեան հպատակն է, որովհետեւ նրա սասանները մեծ նշանակութիւն կունենան ընթերցողներին և պատմաբանների աչքումը: Անշտ է ասել Տ-հանգիր խանը « մեծամեծ պաշտօններ է վարում », բայց ինչ պաշտօններ, պ. յօդուածագիրը թուում է երեւակայական պաշտօններ և բացի զինապետութիւնից՝ միւսներն անհիմն են, և էս վերջին պաշտօններն էլ ի սկզբանէ անտի՝ Երանումը անանջատ են և միշտ էլ մէկ անձն է կղել էն պաշտօնները վարողն:

Ինչ պատմաբան, ճանապարհորդ և յօդուածագիր ուղեկայ այժմեան Պարսկաստանի զինուորական և քաղաքական պաշտօնների, աստիճանների կոչումները և պատուանունները համեմատելով Աւերոպականների հետ՝ կամենայ ճշտութեամբ սահման տալ նրանց, նախախառնի և շարաչար կախալացնէ ընթերցողներին, որովհետեւ Երանումը նոցա մասին զրական և զրաւոր սահմանուած օրէնք՝ կարգ և կանոններ չկան:


Ախոս որ Պ. Բաֆֆին հրէք Թէհրան չէ եղած, որ ականատես մուսուլմաններիցն անգամ մանրամասնաբար լրտել էր Տ-հանգիր խանի շատ գեղեցիկ բարոյական յատկութիւնները (որով մանրանալ մեր նպատակիցն արտաքոյ է), մանաւանդ 1873 ամիՇ, ահի բացակայութեան ժամանակին պատահած էն երեւելի քաղաքական անցքը, որի մէջ Տ-հանգիր խանը զիւրազանական դեր խաղացողների հեղինակն և զլիսաւորն էր, և իւր սուր անաստեղծական զընդմէ էր նկարագրել,

որպէս զի մեր զրականութեան մէջ յաւերժական տպացոյց և օրինակ էր մնացել այլ և այլ պետութիւնների մէջ ծառայող Աայերին:

Խօսքերնիս վերջացնելու ժամանակը մեր ամեն սասանները համառօտելով և նրանցից իրական հետեւութիւն հանելով՝ բաւական համարենք ասել թէ, մեր ազգային պատմական հիւսուածների անաչառութիւնը, ճշմարտախօսութիւնը և անսնափառութիւնը (ինչպէս և արեւմտեան զիտնականներն էլ ընդունած են) յատկանիշ և համարձակ ասում եմ, ազգային սեպհականութիւններ են, ուրեմն այժմ մեր զարումը չափազանց զովասանքներ շոյլել որ և իցէ մէկ Աայ — երեւելի անձնաւորութեան ու մեր պատմութեան էջիւրը զմայելի գոյներով լցնել, ոչ միայն կնրսեմացնէք մեր անցեալները և նրա կենսագրութիւնը, որի վերայ խօսում ենք, այլ և ազգային ոգւոյ և բնաւորութեանը ևս ըստ ամենայնի ընդդէմ է:

ԳԱՍՈՒՍՏ ԵՒՐՄԱԶԱՆԵԱՆՑ.

Ի Թ. Գ. Գ. Գ. Գ.



ՊԱՇՏՊԱՆԻՔ.

Խօսքերն-Էն Երաբար ամասագրոյ.

Հոգարարծական Վարչութիւն երկուց սեռից Թեմական - Հոգեւոր Գարոցաց՝ առաքելով ընդ ամին զանուանական ցուցակ պաշտօնաւ Անդամոց իւրոց, խոնարհաբար խնդրէ տպագրութեամբ յէս Արարատ ամաղորդ հրատարակիլ ի զիտութիւն ընդհանրութեան Ազգայնոց: